ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Վճարովի ծառայությունների մատուցման մասին

,,01,, մարտի 2018թ. ք.Երևան

,,Ջրառ,, փակ բաժնետիրական ընկերությունը, /այսուհետև՝ Կատարող/ ի դեմս տնօրեն Կարեն Եփրեմյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և ,,Հեր-Հեր,, հիդրոէլեկտրակայան,, փակ բաժնետիրական ընկերությունը /այսուհետև՝ Պատվիրատու/ ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Լիսիկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1.1 Համաձայն սույն պայմանագրի՝ Կատարողը պարտավորվում է, ջրամբարում ոռոգման ջրի առկայության դեպքում, էլեկտրական էներգիայի արտադրման նպատակով, Պատվիրատուին մատուցել ջրի մատակարարման վճարովի ծառայություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայության համար:

1.2 Ջրի թողքի մեծությունը կազմում է 0.5-1.2 խորանարդ մետր վայրկյան:

1.3 Մատուցված ծառայության հաշվառումը կատարվում է ջրամբարի և ՀԷԿ-ի հերթապահների ստորագրությամբ ամենօրյա վարվող ու ամսվա վերջում կողմերի լիազորված անձանց՝ ջրամբարի և ՀԷԿ-ի պետերի ստորագրությամբ հաստատվող ջրի թողքերի Ակտ-օրագրերով:

Տվյալ ամսվա կտրվածքով ծառայությունը մատուցված է համարվում Պատվիրատուի լիազորված անձի կողմից Ակտ-օրագրի ստորագրման պահից:

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Կատարողը պարտավոր է՝

ա/ ջրի թողքերի դադարեցման մասին ՀԷԿ-ի ղեկավարությանը տեղեկացնել 48 ժամ առաջ, իսկ նախավթարային և վթարային իրավիճակներում՝ վիճակի հայտնաբերման պահին.

բ/ ապահովել ջրամբարի հերթապահների կողմից Ակտ-օրագրերի վարման նպատակով ջրի թողքերի մեծության ամենօրյա գրանցումը ժամը 10.00-ի դրությամբ:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

ա/փոխգործակցելով Կատարողի հետ՝ ջրի թողքերի փոփոխության անհրաժեշտության մասին հայտնել ոչ ուշ քան 24 ժամ առաջ, իսկ նախավթարային ու վթարային իրավիճակներում՝ իրավիճակի հայտնաբերման պահին.

բ/ ՀԷԿ-ի հերթապահների միջոցով ապահովել ջրի թողքերի Ակտ-օրագրերի վարումը, ջրի թողքի մեծության ամենօրյա գրանցումը՝ ժամը 10.00-ի դրությամբ և ամսվա ավարտին հաջորդող 3 աշխատանքային օրերի ընթացքում Ակտ-օրագրերի հաստատումը:

գ/ ՀԷԿ մուտք գործած ջուրը թափել գետահուն չաղտոտված վիճակում, բացառել ՀԷԿ-ում ու դրա տարածքում ջրի ու գետահունի աղտոտումն ու աղբոտումը /յուղեր, նավթամթերք և այլն/:

դ/ ծառայության դիմաց վճարումը կատարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին ու ժամկետներին համապատասխան.

2.3 Կատարողն իրավունք ունի՝

ա/ ցանկացած ժամանակ ստուգել ՀԷԿ-ից գետ թափվող ջրի ու ՀԷԿ-ին հարող գետահունի տարածքի մաքրության վիճակը՝ բացառելով ջրերի հնարավոր աղտոտումը /յուղեր, նավթամթերք և այլն/:

բ/ ստուգել տուրբինային ճնշումային ջրատարի ջրի ֆիլտրացիոն երևույթների ու դրանց ջրի մեխանիկական կորուստների առկայությունը.

գ/ պահանջել Պատվիրատուից՝ վերացնելու սույն պայմանագրի 2.2 կետում նշված պարտավորությունների կատարման ընթացքում առաջացած թերությունները:

2.4 Պատվիրատուն իրավունք ունի՝

ա/ ցանկացած ժամանակ ստուգել երկկողմ պայմանավորված ջրի թողքերի մեծությունը, պահանջել վերացնելու հայտնաբերված շեղումները.

բ/ պահանջել և ստանալ Կատարողից տվյալներ՝ ջրամբարում ջրի կուտակման, առկա կուտակված ջրի ծավալների և պլանավորվող թողքերի ու ջրամբարի դատարկման հետ կապված ծրագրվող միջոցառումների մասին.

գ/ ամենօրյա Ակտ-օրագրերի վարման ընթացքում առաջացած հարցերի լուծման համար ներկայացնել պահանջներ, առաջարկություններ:

Կատարողն ու Պատվիրատուն փոխադարձաբար իրավունք ունեն ստուգելու սույն պայմանագրի կատարման ընթացքը՝ առանց միջամտելու միմյանց գործունեությանը:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1 Սույն պայմանագրի գինը կազմում է ամսական 70000 /յոթանասուն հազար/ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

3.2 Վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամիս, մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը՝ մեկ ամսվա համար հաշվարկված գումարի չափով:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /Ֆորս-մաժոր/

4.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող դա կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքը դադարեցնելը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

4.2 Ֆորս-մաժորային իրավիճակը պետք է հաստատվի ՀՀ իրավասու մարմնի կողմից:

4.3 Ֆորս-մաժորային իրավիճակը սկսվելու և ավարտվելու մասին կողմերը ծանուցում են միմյանց 3-օրյա ժամկետում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Վճարումն ուշացնելու յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար Ընկերությունը «Զրահ» ՓԲԸ -ին վճարում է տույժ՝ չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով:

5.2 Վճարման պարտականությունը երեք ամսվա ընթացքում Պատվիրատուի կողմից չկատարվելու դեպքում Կատարողն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել պայմանագրի կատարումը և լուծել պայմանագիրը:

5.2. «Զրահ» ՓԲԸ-ին պատճառված վնասի ռիսկը կրում է Ընկերությունը, եթե դա եղել է վերջինիս պատճառով:

6. Այլ պայմաններ

6.1 Սույն պայմանագրի գործողության ժամկետը մինչև 01.03.2019թ.:

6.2Պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

6.3. Սույն Պայմանագրին կցվում և անբաժանելի մաս են կազմում՝

ա/Հեր-Հերի ջրամբարից էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով ջրի մատակարարման սխեմա – 2 էջ

բ/ ջրի թողքերի մեծության ամենօրյա գրանցման Ակտ-օրագրի ձևանմուշը – 1էջ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

,,Պատվիրատու,,	,,Կատարող,,
,,Հեր-Հեր,, հիդրոէլեկտրակայան ՓԲԸ	,,Զրահ,,
ՀՀ, ք.Երևան Դավթաշեն 3-րդ թաղամաս 30 տուն	ք.Երևան, Վարդանանց փ. 8ա
հ/հ 163678002938	հ/հ 2479000059160000
,,Հայէկոնոմբանկ,, ԲԲԸ	Արդշինբանկ ՓԲԸ
Դավթաշեն մ/ճ	ՀՎՀՀ 00093621
ՀՎՀՀ 08914453	

տնօրեն՝ Ա. Լիսիկյան

տնօրեն՝ Կ. Եփրեմյան